Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 հունվարի, 2015 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին, հայոց բանակի քաջարի զորավարներին եւ զինվորներին:

Մեր ժողովրդի պարծանքն է պատերազմական հերոսամարտերում ձեւավորված ու ամրապնդված հայոց բանակը, որ մեր նոր պատմության վճռական պահին հայրենասեր սրտով եւ քաջակորով ոգով մեծ հաղթանակներ նվաճեց՝ հանուն Հայաստանում եւ Արցախում մեր ժողովրդի ազատ ու խաղաղ կյանքի:

Այսօր էլ հայոց բանակի մշտարթուն ծառայությամբ ապահով են մեր երկրի սահմանները: Շնորհիվ մեր զինվորների եւ զորավարների նվիրումի ու հավատավոր հոգու արիության՝ կանխվում են մեր ժողովրդի խաղաղ եւ բնականոն կյանքը խափանող ոտնձգություններն ու վտանգները:

Մեր մարտիկների փառապանծ ծառայության բարձր գնահատանքով Մեր աղոթքն ենք վերառաքում առ Ամենակալն Աստված, որ Իր խաղաղ օթեւաններում ընդունի հանուն հայրենյաց զոհված մեր հերոս զավակների հոգիները, ապավեն լինի եւ զորացնի Հայոց Բանակի արիասիրտ սպաներին ու զինվորներին՝ ի սեր հայրենյաց իրենց նվիրական կոչման մեջ:

Թող Փրկիչ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ ու անվրդով պահի Հայրենի մեր երկիրը, ապահով եւ բարօր կյանք պարգեւի բարեպաշտ մեր ժողովրդին: